ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010 Երևան Վ. Սարգսյան, հեռ. 594015

N /27.0.01/51261-2024
«16» դեկտեմբերի 2024թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ
ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սանթրոսյան,

Ի պատասխան Ձեր՝ 2024 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 2783-2024 գրության՝ կից ներկայացվում է «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ,
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

Восстановимая подпись

X

ՏԻԳՐԱՆ ԱՐԵՅԱՆ

Подписано: AREYAN TIGRAN 3014720305

ՏԻԳՐԱՆ ԱՐԵՅԱՆ

Կատարող՝ Լուսինե Մուրադյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. (010) 594-085

ՋՐՎԵԺԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՍՏԱՑՎԱԾ է «17» 12 2024թ.
Մուտք թիվ 4702

Արդարադատության
Նախարարություն

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

1.«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) նախաբանում *«առաջին մասի»* բառերն առաջարկում ենք փոխարինել *«1-ին մասի»* բառերով:

2. Նախագծի հավելվածների վերնագրերն անհրաժեշտ է համապատասխանեցնել Նախագծի 1-ին կետի 2-7-րդ ենթակետերի բովանդակությանը:

3. Նախագծի 3-րդ կետով սահմանվում է, որ *սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:*

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նախագծով նախատեսվող որոշումը կարող է հրապարակվել 2025 թվականի հունվարի 1-ից հետո, ուստի առաջարկում ենք Նախագծի 3-րդ կետով սահմանել, որ *սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2025 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:*

Իրավական ակտերի փորձաքննության
գործակալության պետ՝

Восстановимая подпись

X

ԷՄԻԼ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Подписано: MARGARYAN EMIL 4014910245

Է. ՄԱՐԳԱՐՅԱՆ